



CONVERSE
PostBank
Բոլորի համար

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ
ՈՒՂԵՑՈՒՅՑ



www.postbank.am

Նարգելի Նաճախորդ,

Այս գրքույկն ուղեցույց է՝ «Կոնվերս Բանկ ՓԲԸ-ում հաշիվների բացման և վարման պայմաններին, ինչպես նաև մատուցվող ծառայությունների սակագներին և դրույքներին ծանոթանալու համար: Առաջարկում ենք հանգամանորեն ծանոթանալ ուղեցույցին, ինչպես նաև գովազդային-պրեդեկարվական թերթիկներին:

Բանկային հաշիվները բացվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց համար հետևյալ արժույթներով՝

- ՆՆ դրամ
- ԱՄՆ դոլար
- Եվրո
- ՌԴ ռուբլի
- այլ արժույթով

«Կոնվերս բանկ ՓԲԸ (Բանկ)-ի առաջարկվող ծառայությունների ներկայիս գործող սակագներին Նաճախորդը կարող է տեղեկանալ սույն Տեղեկարվական Ամփոփագրում զեպտեղված գովազդային-պրեդեկարվական թերթիկներից, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերի և Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքի միջոցով: Բանկն իրավունք ունի փոփոխելու սակագները, ընդ որում նաև հաշվին առկա դրական մնացորդի դիմաց վճարվող փոկոսադրույքը, որի մասին նախօրոք տեղեկացվում է փոստով, էլեկտրոնային փոստով, Բանկի մասնաճյուղերի և Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքի միջոցով՝ կախված հաճախորդի ընտրությունից:

ԱՆՆՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Ֆիզիկական անձինք բանկում խնայողական հաշիվ բացելու համար պետք է՝

ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- անձը և քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ զինվորական գրքույկ),
- սոցիալական գրանցման քարտ կամ դրա բացակայությունը հաստատող փաստաթուղթ (միայն ՏՏ ռեզիդենտների դեպքում),
 - լրացնեն Բանկի կողմից պրամադրված հաշվի բացման դիմումը (ֆիզիկական անձանց համար):

**ՏՏ ռեզիդենտ իրավաբանական անձինք
ընթացիկ հաշիվ բացելու համար պետք է՝**

ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- կանոնադրություն,
- համապատասխան կազմակերպարավական տեսակի ձեռնարկության, կազմակերպության համար ՏՏ օրենսդրությամբ սահմանված հիմնադիր ժողովի արձանագրություն,
- ՏՏ պետբեգիստրում Նաճախորդի գրանցման վկայական, իսկ հասարակական կազմակերպության դեպքում՝ գրանցման վկայական՝ գրանցված Արդարադատության նախարարությունում,
- ՆՎՏՏ (հարկ վճարողի հարկային համար),
- քաղվածքներ ղեկավար անձանց նշանակման մասին հրամաններից կամ որոշումներից,
- ղեկավար անձանց անձնագրերի պատճենները,
- տեղեկություններ բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե բացակում է կանոնադրությունում):
 - լրացնեն Բանկի կողմից պրամադրված հաշվի բացման դիմումը (իրավաբանական անձանց համար) և դրամական միջոցների կարգադրիչների «ստորագրության նմուշների և կտր կնիքի դրոշմի քարտի և ստորագրման մեկ օրինակ՝

գրանցված հարկային տեսչության փարաձքային մարմիններում:

ՆՏ ռեզիդենտ իրավաբանական անձինք ընթացիկ հաշիվ բացելու համար պետք է՝

ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- կանոնադրություն,
- փվյալ երկրի գրանցող պետական մարմնի կողմից փրված վկայական,
- հիմնադիր փաստաթղթեր փվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով,
- քաղվածքներ ղեկավար անձանց նշանակման մասին հրամաններից կամ որոշումներից,
- տեղեկություններ բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե բացակում է կանոնադրությունում):
 - լրացնեն Բանկի կողմից փրամադրված հաշվի բացման դիմումը (իրավաբանական անձանց համար) և դրամական միջոցների կարգադրիչների «ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտի և ստորագրման մեկ օրինակ՝ գրանցված հարկային տեսչության փարաձքային մարմիններում:

Անհատ ձեռնարկատերերը ընթացիկ հաշիվ բացելու համար պետք է՝

ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- ՆՏ պետական ռեզիստրում գրանցման վկայական,
- ՆՎՆՆ (հարկ վճարողի հարկային համար),
- Անձնագիր
 - լրացնեն Բանկի կողմից փրամադրված հաշվի բացման դիմումը (անհատ ձեռնարկատերեր անձանց համար) և դրամական միջոցների կարգադրիչների «ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտի և ստորագրման մեկ օրինակ՝ գրանցված հարկային տեսչության փարաձքային մարմիններում:

Անվճարունակության ընթացիկ հաշիվ բացելու համար պետք է՝

ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դավարանի վճիռ կազմակերպության անվճարունակության ճանաչման մասին,
- դավարանի որոշումը «Կառավարիչ նշանակելու մասին»,
 - լրացնեն Բանկի կողմից տրամադրված հաշվի բացման դիմումը (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատերեր անձանց համար) և կառավարիչի «ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտի մեկ օրինակ:

Նպատակային հաշիվ կարող են բացել միայն Բանկի հաճախորդները, որոնք արդեն ունեն հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և պետք է ներկայացնեն դիմում նպատակային հաշվի բացման համար՝ նշելով հաշվի բացման նպատակը:

Այն ռեզիդենտ իրավաբանական անձինք, ովքեր դեռ պետական ռեզիստրում գրանցված չեն կարող են բացել **անցումային հաշիվ** և կատարել միայն մուտքագրումներ:

Ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտը պահանջվում է միայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում, նրանց կողմից հաստատման ներկայացվում գրանցման վայրի համապատասխան տարածքային հարկային տեսչության և դրանից հետո ներկայացվում է Բանկ հաստատման:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Որպես քաղվածքին փոխարինող փաստաթուղթ, Բանկը խնայողական հաշիվ ունեցող ֆիզիկական անձանց՝ ըստ ցանկության, կարող է տրամադրել բանկային գրքույկ:

Բանկային գրքույկում նշվում է Բանկի (եթե հաշիվը բացված է Բանկի մասնաճյուղում, ապա նաև

մասնաճյուղի)՝

- անվանումը,
- գտնվելու վայրը,
- հաճախորդի հաշվի համարը,
- հաճախորդի հաշվին մուտքագրված և հաշվից դուրս գրված դրամական միջոցների բոլոր գումարները,
- բանկային՝ Բանկ ներկայացնելու պահին հաշվին առկա մնացորդը

Բանկային գրքույկ ունենալու դեպքում Նաճախորդը Բանկին ներկայացնում է այն՝ կատարված գործարքների մասին գրառում կատարելու համար: Բանկի կողմից Նաշվով կատարված յուրաքանչյուր գործարք գրքույկում գրառվում է առանձին:

Բանկի այն Նաճախորդները, որոնք ունեն Բանկում բացված ընթացիկ և խնայողական բանկային հաշիվներ, և այդ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներ՝ անկախ արժույթի փոփոխություններից և քանակից, կարող են ձեռք բերել դրամարկղային չեկային գրքույկներ՝ իրենց բանկային հաշիվներից կանխիկ դրամական միջոցներ ստանալու/ելքագրելու/համար:

Բանկը Նաճախորդի օգտին ստացված դրամական միջոցները Նաճախորդի հաշվին մուտքագրում է ոչ ուշ, քան մուտքագրումը հաստատող փաստաթղթերի ստացման հաջորդող բանկային օրը:

Բանկը հաճախորդի համար կարող է իրականացնել Արժեթղթերի առք ու վաճառք Բանկում գործող սակագների համաձայն:

Նաճախորդի համապատասխան հայտերի, հանձնարարականների կամ պայմանագրերի հիման վրա Բանկը կարող է հաշիվներից իրականացնել փարբեր փիպի պարբերական գործողություններ, ինչպիսիք են՝

- վարձավճարների գանձում,
- գործող վարկերի(կամ դրա մի մասի), փոկոսների մարումներ, փուլերի և փուլգանքների գանձումներ,
- ավանդների ներգրավում, հաշվարկված փոկոսների հաշվեգրում ավանդային կամ բան-

կային հաշվին, ավանդների և/կամ փոկոսների մարում,

- այլ գործառնություններ, որոնք արգելված չեն ՆՏ իրավական ակտերով և ՆՏ գործող օրենսդրությամբ:

Ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ ՆՏ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի և/կամ Բանկի ներքին նորմատիվային ակտերի պահանջների համաձայն՝ Բանկն իրավունք ունի հաճախորդից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում՝ հրաժարվել հաշվով գործարքներ կատարելուց, ընդհուպ մինչև Նաճախորդի համար հաշվի բացումը:

Նշված տեղեկությունների ճշտումը կատարվում է հավաստագիրը կամ Բանկի կողմից տրամադրված համապատասխան փաստաթուղթը (հավաստագիր), Նաճախորդի կողմից պատշաճ ձևով լրացնելու և առձեռն կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով Բանկ ներկայացնելու միջոցով: Նշված փաստաթուղթը Նաճախորդի կողմից ոչ ողջամիտ ժամկետում ներկայացնելու կամ Բանկի կողմից անբավարար գնահատվելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնելու հաճախորդի հաշվով իրականացվող բանկային գործառնությունները:

ՆԱՇՎԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՆԱՇՎԵԳՐՈՒՄ

Բանկային հաշվի համար դրական մնացորդի փոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով: Ընդ որում.

- ա) Տոկոսագումարը հաշվեգրվում է հաշվին յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի ավարտմանը հաջորդող ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը,
 - բ) Տոկոսագումարների հաշվեգրումից առաջ պահվող հարկեր՝
- ֆիզիկական անձանց և ոչ ռեզիդենտ անհատ

ձեռնարկատերերի դեպքում 10% եկամտահարկ,

- ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց դեպքում՝ 10% շահութահարկ:

Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է, ըստ սույն Ամփոփագրում զեպտեղված Բանկի Սակագներում ներկայացված փոկոսադրույքի, հետևյալ կերպ, օրինակ՝

1. Օրվա վերջին խնայողական հաշվի դրական մնացորդը կազմում է 100,000 ՀՀ դրամ,
2. Հաշվի դրական մնացորդի դիմաց փարեկան փոկոսադրույքը կազմում է 3%

$$\text{օրվա մնացորդի եկամուտ} = \frac{100,000 (\text{օրվա վերջին հաշվի դրական մնացորդ}) * 3\% (\text{փարեկան փոկոսադրույք})}{365 \text{ կամ } 366 (\text{փարվա օրերի քանակ, նահանջ փարի})} = 8.22$$

Ենթադրենք եռամսյակը կազմում է 91 օրացուցային օր և եռամսյակի ընթացքում հաշվի մնացորդը չի փոփոխվել, ապա.

$$\text{եռամսյակային եկամուտ} = 8.22 (\text{օրվա եկամուտ}) * 91 (\text{եռամսյակի օրերի քանակ}) - 74.80 (10\% \text{ հարկի փոկոսադրույք}) = 673.22$$

Արդյունքում՝ եթե խնայողական հաշվի դրական մնացորդը կազմի 100,000.0 ՀՀ դրամ՝ ամփոփոխ եռամսյակի ընթացքում, ապա եռամսյակը ավարտին հաջորդող առաջին 5 բանկային օրվա ընթացքում բանկային հաշվին կմուքագրվի 673.22 ՀՀ դրամ:

ՆԱՇՎԻ ՓԱԿՈՒՄ

Բանկային հաշիվը կարելի է փակել.

- ցանկացած ժամանակ Նաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Այդ դեպքում Նաճախորդից գանձվում է սակագներով սահմանված հաշվի փակման միջնորդավճար
- եթե Նաճախորդի ընթացիկ հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է Բանկի սակագներով

սահմանված նվազագույն չափից և չի վերականգնվել այդ մասին Բանկի կողմից (գրավոր կամ բանավոր) զգուշացման օրվանից մեկ ամսվա ընթացքում

- անցումային հաշիվը փակելու դեպքում հաշվին առկա ամբողջ գումարը վճարվում է
- հիմնադրին կամ հիմնադիրներին, եթե առկա է տեղեկանք պետական ռեզիստրի կողմից տվյալ կազմակերպության չգրանցելու վերաբերյալ
- կազմակերպության փնտրենին, եթե առկա է իրավաբանական անձի համար պահանջվող ամբողջ փաստաթղթերի ցանկը:

Եթե Նաճախորդը ցանկություն է հայտնում վերաբացելու փակված հաշիվը, ապա հաշիվը վերաբացվում է միայն նոր պայմանագրի և պահանջվող փաստաթղթերի թարմացված փաթեթը ներկայացնելուց հետո:

ՆԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Նաճախորդն իրավունք ունի՝

- պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ տեղում ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկադրամարկդային գործառնությունների և այլ բանկային ծառայությունների իրականացման ներբանկային կարգերին և Սակագներին, այնքանով, որքանով դրանք չեն հանդիսանա բանկային կամ առևտրային գաղտնիք:
- չեղյալ համարել իր կողմից ներկայացված վճարման հանձնարարականը՝ ժամանակին Բանկ ներկայացնելով պատճառաբանված համապատասխան ծանուցում և փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած ծախսերն ու վնասներն ամբողջությամբ: Վճարման հանձնարարականի մերժման և/կամ չեղյալացման կարգը, հիմքերը և պայմանները սահմանվում են ՆՇ նորմատիվ իրավական ակտերով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

*/Վերաբերում է միայն ֆիզիկական
անձանց և անհատ ձեռնարկատերերին/*

Նարգելի ավանդաբու,

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է
Ավանդների հատուցումը երաշխավորող
հիմնադրամը (այսուհետև՝ Նիմնադրամ):
Նիմնադրամի գրանվելու վայրը՝ ՆՆ 0010, ք. Երևան,
Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա բիզնես
կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ.
Նեռախոսը՝ (37410) 582321, 582322
Ինտերնետային կայքը՝ www.fsm.am

Սույն ծանուցման բոլոր սահմանումները
համապատասխանում են «Ֆիզիկական անձանց
բանկային ավանդների հատուցումը
երաշխավորելու մասին Նայաստանի
Նանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք)
սահմանումներին:

Նախուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է
հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Նայաստանի Նանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը
ճանաչվում է անվճարունակ և Նայաստանի
Նանրապետության կենտրոնական բանկի
(այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի
որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և
պայմանագրերով սահմանված ժամկետներում
ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու
փաստը կամ

2. Եթե Նայաստանի Նանրապետության օրենս-
դրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է



ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Նայասփանի Նան-րապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՆՆ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 1 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 1 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	2 միլիոն ՆՆ դրամ	1 միլիոն ՆՆ դրամ	2 միլիոն ՆՆ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	1 միլիոն ՆՆ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ մեկ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի փարքերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համապեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում

է Ձեր առանձին բանկային ավանդի և համարեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե Դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական փարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Երկու կամ ավելի ավանդատուների համարեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

Եթե պայմանագրով սահմանված չեն համարեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համարեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը փողի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը փողի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Ձերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք փվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընդհանրի անդամ,
- բ) Դուք հանդիսանում եք փվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընդհանրի անդամ,
- գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել

ե) Ձեր ավանդը փվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին փվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախադեպում նմանափայ բանկային ավանդների փոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող փոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Նայասփանի Նանրապեփության փարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հափուցման կարգը, ժամկետները

Նափուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Տիմնադրամը հայտարարություն է հրապարակում հափուցման դեպքի մասին: Նափուցման դեպքի օրվան հաջորդող երեսուօրյա ժամկետում Տիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հափուցման գործընթացը: Գործընթացը սկսվում է զանգվածային լրափակյան միջոցներում հափուցման վերաբերյալ Տիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հափուցման դեպքի օրվան հաջորդող մեկ փարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Տիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հափուցում չի իրականացվի: Տիմնադրամը պարփավոր է իրականացնել ավանդափուների պահանջներով հափուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախադեպում դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հափուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հափուցված գումարի չափով համարվում է բավարարված:

Նապուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարավորությունը Ձեր նկատմամբ:

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՇՏԱՐԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկացնում ենք, որ "Ֆինանսական համակարգի հաշվարարի մասին" ՆՇ օրենքի համաձայն՝ Դուք կարող եք "Կոնվերս բանկ" ՓԲԸ կողմից Ձեզ մաքուցվող ծառայությունների և փաստաթղթերի համար կամ համարժեք արժույթով գումարը չգերազանցելու գույքային պահանջ ներկայացնել ֆինանսական համակարգի հաշվարարի քննությանը:

ՎԵՃԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

Նաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և փարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՆՇ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական համակարգի հաշվարարի միջոցով/Ֆիզիկական անձանց դեպքում/: